Կայսրն յետ ողջունելոյ զինուորական աստիճանաւորս՝ եկն եհաս յիմ հանդէպ, ուր նահանգապետն յառաջեալ ծանօթացոյց զիս Կայսերն. Կայսրն եհարց յինէն. « ուրեմն Բագուէ Արք-եպիսկոպոսն էք». ես պատասխանեցի (Գրիգոր քահանայն յառաջացեալ թարգմանեաց՝ որ ընդ այլ եւս երից աւագ քահանայից կային ի թիկանց կուսէ իմմէ). —Այո՛, բայց Շամախի բնակելով՝ հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի եկել եմ Շամախւոյ թեմի Հայ ժողովրդեան կողմից շնորհաւորելու Ձեր Կայսերական Մեծութեան շնորհաբեր գալուստը։—Կայսրն ուրախ դիմօք շնորհակալութեան նշան ցուցանելով ասաց. «Այո, Կաթուղիկոսին տեսի Թիֆլիզ», ասաց և ձեռքն տուեալ ինձ՝ էանց յառաջ, և այսպէս ողջունելով մի առ մի զամենայն պատգամաւորս, և զաշակերտս և զաշակերտուհիս՝ նստան ի կառս, նոյնպէս և Կայսրուհին և Ժառանգն և մեծամեծքն և գնացին օրհնել զհիմն նոր եկեղեցւոյ Ռուսաց յանուն սրբոյն Աղէքսանդրի Նեւացւոյ. իսկ ես և որք ցանկացան, վերադարձաք ի բնակութիւնս —վասն զի՝ անդ չէր նշանակեալ ինձ տեղի կալոյ։

Յերեկոյին նոյն աւուր ընկալայ ի նահանգապետէն զվիմատիպ տոմսակ հրաւիրանաց, որով յայտնէ թէ «Նոցին Կայսերական մեծութիւնքն հրաւիրեն ի ճաշ՝ յ9 ամսոյս յերեկոյեան 7րդ ժամուն»։

Եւ այն ինչ եհաս նշանակեալ 7րդ ժամն՝ ի միասին ընդ այլ հրաւիրեալ Հայ իշխանաց գնացաք ի պալատն՝ ի ճաշ, ուր յետ ժողովելոյ բոլոր հրաւիրելոց, որք յիսնիւ չափ կային, և պատրաստ կալոյ՝ ապա Կայսրն հանդերձ իւրովքն եկն ի սեղանատունն, և ողջունեալ զբազմականսն՝ եկաց առ աթոռովն՝ ուր նստելոց էր. Էքզարխն Վրաստանի ընդ արեւելս կանգնեալ՝ ասաց զ«Հայր մեր» աղօթս, և ապա նստան իւրաքանչիւրն յիւրում յատկացեալ աթոռի, որպէս և ես նստայ յաջմէ Էքզարխին և ուղղակի հանդէպ Կայսերն և Կայսրուհւոյն և Ժառանգին, և Կայսրն սկսաւ ուրախ ուրախ խօսել ընդ Կայսրուհւոյն, և ճաշել. երբեմն խօսակցէր ընդ Ժառանգին, երբեմն ընդ մերձակայ մեծամեծսն և ընդ Էքզարխին։ Ի ժամ ճաշուն Կայսրն յոտին կանգնեալ (և ամենեքեան ի հարկէ իսկոյն) առաջարկեաց և ըմբեաց զբաժակ